

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ
ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԻ ՓՆՏՈՏՈՒՔԸ ՎԱԶԳԵՆ
ՇՈՒՇԱՆԵԱՆԻ «ՍԻՐՈՅ ԵՒ ԱՐԿԱԾԻ ՏՂԱՔԸ» ՎԷՊՈՒՄ»**

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

բ.գ.դ., Պրոֆեսոր, Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարտիզունու ան. Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրէն

Բանալի բառեր - Վազգէն Շուշանեան, արձակ, ինքնակենսագրական վէպ, սփիւռքահայ գրականութիւն, Հայաստանի Առաջին Հանրապետութիւն, հերոս-հեղինակ:

Ключевые слова: Васкен Шушанян, проза, автобиографический роман, Армянская литература Диаспоры, Первая Республика Армения, герой-автор.

Key words: Vazgen Shushanyan, prose, autobiographical novel, Diaspora Armenian literature, The First Republic of Armenia, hero-author.

Այսօր էլ անմեկնելի է թու՛մ, թէ՛ որտեղ եւ երբ հայոց քնարական արձակի անթագակիր արքայ Վազգէն Շուշանեանը հասցրեց իրացնել իր ժողովրդի ներհակ քաղաքական հարուստ պատմութիւնը, միջազգայնական սոցիալիստական շարժման, համաշխարհային մշակոյթի հանգրուանները՝ կլլելով այն, ինչ պէտք է, որբին փշրանքի պէս նետուած «դառը հաց»ի պէս, ինչպէս կոչել է իր վերջին վէպերից մէկը գրողը: Այսօր էլ անմեկնելի է, թէ՛ նա ինչպէս տիրացաւ երազի եւ դժնդակ իրականութեան ընկալման սուր անցումներին, մարդու հոգեբանական քննութեան ծալքերին, աշխարհին, բովանդակ երկրին:

Զարմանքը, յիրաւի մեծ է. չէ՞ որ Վ. Շուշանեանը չունեցաւ ժամանակ կրթուելու, թափառիկ ու անհանգիստ կեանքի մէջ չունեցաւ անգամ անշուք անկիւն, գրասեղան, գրադարակ: Իսկապէս անբացատրելի է՝ այդ ե՞րբ հասցրեց: 1915-ին «...տղայ մըն էր՝ տասներկու տարեկանին՝ թշնամի, օտար ու դաւաճան քաղաքի մը մէջ, ցեխին մէջ ինկած»¹, վիրաւոր ծաղկի պէս: Իսկ ժողովրդի հետ անցած աննկարագրելիօրէն

¹ **Շուշանեան Վ.**, Ամրան գիշերներ, Գահիրէ, մատենաշար «Յուսարեր», թիւ 24, 1930, էջ 112:

արնածոր ճանապարհներին՝ Գոնիա, Իզմիր, Տարսոն, Օսմանիէ, մինչեւ Հալէպ, ցմրուր ընպած տառապանքը ու սիրելիների վերահաս կորուստները իր մէջ զգացականի կողքին ձեւեցին իմացականի հիմքերը:

Վազգէն Շուշանեանը քաղաքական կանխազգացումների գուշակ էր: Միայն 1926-1928 թթ. նա ընկերվարական հարցադրումներով հանդէս էր գալիս «Դրօշակ»ի էջերում, ուր կողմնորոշուել ու կողմնորոշում էր ընթերցողների շրջանակը հակաֆաշիստական իր պողթկումներում, կոչում այն «մութ խեղկատակ»: Եւ սա այն ժամանակ, երբ դեռ ֆաշիստների իշխանութեան գալուն կար եօթը երկար ու ձիգ տարիների շարան:

Դրանից մի քանի տարի առաջ գրողն անցել էր ՀՅԴ շարքերը: Թէեւ գրամշակութային երակ էր որոնածը, այնուհանդերձ նրան խորքով հետաքրքրեցին կուսակցութեան քաղաքական ենթակառուցուածքները: Այդ խորքի մէջ առաջինը ըմբոստի կեցուածքն էր. «Քաղաքական, տնտեսական, գրական-փիլիսոփայական արժէքներու ընդհանուր փլուզում, – գրում է նա 1925-ին պատրաստած բանախօսութիւնների՝ «Գաղութահայ գրականութեան շուրջ» ենթահատուածում: – Հին թէ՛ նոր քաղաքակրթութիւն: Անոնց համար որ հարցը այլ կերպ դրուած է՝ ո՛րն է գրական ուղղութիւնը: Կը քալենք մութին մէջ»: Խօսքը ռէալիզմի կամ ռոմանտիզմի մասին չէ, այլ ո՛րն է գրական զարգացման տրամաբանութեան շարունակականութիւնը: Ընդ որում՝ «Անկարելի օրագիր»ի ամարտին, շարունակելով «Սիրոյ եւ արկածի տղաքը» վէպի «հին», բայց միշտ թարմատի տրամաբանութիւնը, երկու-երեք տարի անց, Վ. Շուշանեանը գրում է. «Այս էջերը վերջանալու վրայ են, ու մեր հոգին դեռ մնաց մութին մէջ»²: Որքան էլ Շուշանեանի հերոսները կամ հերոսը աղաղակեն, թէ պիտի յաղթեն, Երուանդն է, չէ՞, պահի տակ փորձում իրեն համոզել՝ «Ու զգացի որ հետզհետէ փողոցի տղան կ'արթննայ մէջս: Միտքէս կ'ըսէի՝ - Ի՞նչ, չե՛մ կրնար յաղթել սրտիս, այդ միսի կտորին: Եւ յաղթանակելու այդ վայրենի ու չար մտադրութիւնը հետզհետէ արմատ կը նետէր մտքիս մէջ: «Կը յաղթե՛մ, կը յաղթե՛մ, - կ'ըսէի մտովի, - կը յաղթե՛մ...»³: Ճիշդ է նկատել գրականագէտ Ա. Թովչեանը՝ «վերջին ճիգն է, վերջին ըմբոստացումը սա

² **Նոյն տեղում**, էջ 170:

³ **Շուշանեան Վ.**, Ընտրանի, Եր., «Զանգակ-97», 2010, էջ 148:

աշխարհի դէմ»⁴: Մենք էլ յաւելենք մեր կողմից՝ նոյն նժարին են յաղթանակն ու պարտութիւնը, ընդվզումն ու խոնարհումը, քրքիջն ու արցունքը, սէրն ու անկարելիութիւնը:

«Քանի՛ անգամ այս քաղաքը՝ զայրացկոտ ու ապստամբ՝ ոռնացած է պատմութեան դէմ ու աւա՛ղ, իր յեղափոխութիւնը կէս ձգած՝ ճակատագրի ճամբուն վրայ»⁵: Քաղաքը ծննդավայրն էր՝ Արեւելեան Թրակիայի գունեղ կորսուած Ռոդոսթոն:

Հարցադրումը բնագոյով ու նեարդով նա զգում էր Առաջին Հանրապետութեան կազմաւորման շրջանին, երբ ընդամէնը 17 տարեկան պատանի էր: Բայց այն խորացաւ մի փոքր աւելի ուշ, 20-ական թթ. երկրորդ կէսին, երբ փիլիսոփայական արժեւորումները ազգային նկարագրի տարազ հագան առաջին պետականութեան ողբերգական փորձի իմաստաւորման շրջանում, երբ եկան հոգու «ամրան հարուստ գիշերները», ինչպէս Չարենցը նոյն շրջանում պիտի ձեւակերպէր այլ խմբագրումով՝ «էպիքական լուսաբացները»: Ուշագրաւն այն էր, որ Վ. Շուշանեանը ծանր իմացական բեռ է նետում այդ շրջանը ապրող ու վերապրող, իր ես-ը բոլորագծող տիպային բազմերես ուրուագծումների վրայ՝ ամենուրեք ինքն է, իր ենթակայական, իր յախուռն, բայց հոգեկից ճշմարտութեանն ընդառաջ գնացող ներուժը:

1928-1929 թթ. սփիւռքահայ վէպի ձեւաւորման յորդաբուխ շրջան էր. Վ. Շուշանեանը Շ. Շահնուրի հետ լրջմիտ վիպագրի յայտ է ներկայացնում՝ իրատեսակ մարտահրաւէր նետելով արդէն յայտնի դարձած դէմքերին՝ Յակոբ Օշականին եւ Չարեհ Որբունուն, ըստ էութեան՝ վերակազմաւորելով հայ վէպի, Լեւոն Շանթի պարագային՝ նաեւ հայ դրամայի թեմատիկ զարգացման գերակայ կողմնորոշումը, ելնելով աշխարհաքաղաքական վերադասաւորման նոր ընթացքից: Ի դէպ, նոյն շրջանում, այսինքն՝ տապալումից յետոյ, ե՛ւ «Ինկած բերդի իշխանուհին», ե՛ւ Վ. Շուշանեանի ծրագրային «Սիրոյ եւ արկածի տղաքը» վէպը ամփոփում են Առաջին Հանրապետութեան անկման պատճառ-հետեւանքային արդիւնքները գեղարուեստական ենթահողով: Իսկ վէպի՝ միայն երեսնամեայ ընդմիջումից յետոյ առանձին գրքով հրատարակումը հնարաւոր եղաւ

⁴ **Նոյնը**, էջ 71 (տե՛ս Ալեքսանդր Թոփչեանի առաջաբանը):

⁵ **Նոյնը**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, տպ. «Էտվան», Պէյրութ, 1956, էջ 143:

Պէյրութում 1957-ին: Ինչո՞ւ: Սա դեռ առաջին տարակոյս ինչու-ն է՝ խճողուած տպագրութիւնների հարահոսի մէջ:

Վ. Շուշանեանի վիպական հզօր մուտքը բացառիկ պատմութիւն ունի, թոյլ տուէք ասել՝ աններելի, տխուր պատմութիւն գրական հայաստանեան միջանցքներում, երբ տասնամեայ համայնավար վարչակարգի փորձով հարուստ Երեւանում սկսուեց եւ աւելի քան ութսուն յամառ տարիներ, նման ուրիշ օրինակ չկայ, մինչեւ 2010 թուականը շարունակուեց կտրուկ արգելանքի հետեւողական հալածանքի քաղաքականութիւնը, կոյր արշաւը վէպի ընդգրկած ծրագրային նիւթի հանդէպ: Զարմանալ կարելի է, անհասկանալի, անբացատրելի, ռուսը կ'ասէր՝ «непостижимо уму и разуму», նման ծառայամտութիւնը կայսերական գերակայ արժէքներին: Ընդգծենք, որ Հայաստանում առաջին անգամ այն հրատարակութեան է պատրաստել եւ անհրաժեշտ ծանօթագրումներով եւ յղումներով լոյս է ընծայել «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը:

Վէպը ինքնակենսագրական ուղղութիւն ունի, ինչը գրողի նախընտրած կայուն ժանրային եղանակն է: Հերոսը պատանութիւնից երիտասարդութիւն է մտնում նոր խոհերով, քնարական զգացումների գերխտութեամբ, սիրոյ եւ հայրենիքի ճանաչողութեան՝ օր օրի հզօրացող շիկացումներով: Վիպական ժամանակը 20-ական թթ. անմիջական սկիզբն է, վիպական միջավայրը՝ խորհրդայնացող Արեւելեան Հայաստանը՝ արեւմտահայի տեսողական լոյսով, ասել է թէ՛ ժամանակի ահեղացունց իրադարձութիւնների գրական եւ քաղաքական կողմնորոշումների հաղորդական, շիտակ ոճաւորման քննական եղանակով: Վէպում առկայ են հոգեբանական նրբին անցումներ, ինչը 25-ամեայ արձակագրի համար առ նուազն անսովոր երեւոյթ է՝ հենց բնատուր վարպետութեան առումով: Վիպական իւրաքանչիւր հանգոյցում մենք որսում ենք «ընտրութեան» կառուցիկ գերխնդիր, հերոսի առջեւ երկընտրանքից բխած վճռական քայլեր, որոնք կատարել են վէպի կենտրոնական հերոսները՝ տառապանքից ճշմարտութիւն, մերժումից համակերպութիւն եւ անորոշութիւն ձգուող ազգային-քաղաքական մշուշոտ ուղիներին:

Վէպը կարելի է կոչել ճակատագրի ու ճակատագրերի անընդմէջ ընտրութիւն, որտեղ կենսական քայլ կատարելիս հերոսներն ապրում են

ներքին հասունացում, բացայայտում ներանձնական եւ անանձնական ճշմարտութիւնը բեւեռային մեկնակէտերում:

Վէպը պատմում է հերոս-հեղինակի էութիւնը ծալք-ծալք բացող Երուանդի դեգերումները Հայաստանում, ուր եկել է Արմաշի աշակերտական խմբի հետ, ապա փախուստը «կարմրատակած», համայնավարացած երկրից ու վերադարձը ծննդավայր Բաթումիի վրայով: Այստեղ Երուանդի ընկերը՝ Վահրամը, որի նախատիպը Լ.-Զ. Սիրմէլեանն է, նուիրումի բացառիկ օրինակն է. արկածներն ու սէրը միասին են ապրում, հաց ու սիրային գաղտնիքներ են կիսում, անգամ մանրիկ պատանեկան գողութիւնների միասին են դիմում: Սա նշանակում է, որ միայն գործողութիւնների տրամաբանական ընթացքը չէ, որ նպատակ է դարձել, այլ նաեւ հոգեբանական աշխարհի, մթնոլորտի, զոհողութիւնների ենթագիտակցային յատկանիշների ձեւաւորումը, որ ապրում են հերոսները միասին կամ առանձին, այնպէս, ինչպէս ընտրանքի խորհուրդը:

Ընտրութիւններից մեծագոյնը վերաբերում է հայրենիքի ճակատագրին: Վ. Շուշանեանի Երուանդը գործողութիւնների ողջ ընթացքում պարզում է իր համար անլուծելի թուացող խնդիրը՝ ո՞րն է հայրենիքը. ա՞յն, որ կորսուեց մշուշի մէջ, ծննդավայրը, որ խնկելի յիշատակ է, թէ՛ այն, որ այսօր կայ Արեւելքում՝ Հայաստանը, բայց որը դեռ կրում է օտար բարքի ու քաղաքական ազդեցութեան անսահման բարդոյթներ: Հերոսն ինքնին խճողումների յորձանքում է՝ Հայաստանը 1920-ին օտարացումի օրրան է դարձել: Նա բարդոյթը փորձում է յաղթահարել՝ ապաւինելով բնազդին, որը յուշում է՝ Հայաստանում արեւմտահայն է օտարականը կամ «օտարատունկը»: Հետեւութիւնը՝ առարկայացուած հայրենիքը «ժամանակ չունի» հաղորդուելու արեւմտահայոց ճակատագրին: Հայաստանը դեռ չի իմաստաւորել եղերականը:

Ի՞նչ է Հայաստանը Երուանդի, Վահրամի, Կեդրոնականցու եւ նրանց նման արեւմտահայ լքեալների համար: Այդ օրերին նրանք որսում են օդի մէջ պտտուող, իրենց ենթագիտակցութիւնների շուրջ գալարուող գաղջ պատասխանը՝ «Ռուսաստան դարձած երկիր»: Ուրեմն ի՞նչ երջանկութեան մասին կարող է խօսք լինել ռուսական օրախնդիր քաղաքական շահերի Հայաստանում: Ահա թէ ինչու է հերոսը յայտարարում՝ «Մենք ալ

որոշեցինք վերադառնալ մե՛ր Հայաստանը»⁶: Ըստ էության՝ վէպի բարոյագիտական գլխաւոր հարցադրումը դառնում է Հայաստանի՝ ընտրութեան խնդիրը՝ մշակութային ճանապարհով:

Կոմունիզմը օտար գաղափարն է, որի «իւրացումը» արժանանում է հերոսի դառն ծաղրին: Հետաքրքիր, հեզնախառն, բայց նուրբ, գրեթէ աննկատ պատկերներ է կազմում արձակագիրը, երբ ներկայացնում է համայնավարների յաղթաշունչ երթը Հայաստան աշխարհում: Ընդ որում՝ Լենինի պաստառն այստեղ վերաճում է կերպարի, հեզնանքն սկսում է այստեղից, որին միախառնում են թախիժն ու երգիծանքը. «Լենին կ'իշխէր բազմութեան վրայ: Անոր հասակը առ նուազն իրականին կրկինը պէտք է ըլլար: Անոր դէմքը կ'արտայայտէր մեծ որոշում մը ու նաեւ զօրաւոր, անյաղթելի ու ահաւոր կամք մը այդ որոշումը կեանքի կանչելու համար: Անոր ճակատագրական ու մարգարէ բազուկը կ'երկարէր դէպի ապագան»⁷:

Եթէ դա ապագան է, ուրեմն օր առաջ պէտք է թօթափել ունկերի մէջ զօրացող արձագանգները, զգացումները, օր առաջ փախչել իրենց քայլ առ քայլ սրտով նուաճող, բայց ոգով վանող Հայաստանից: Մերժելով համայնավարների գերիշխանութիւնը՝ Երուանդն ու Վահրամը առաջին ծանր հարուածը հասցնում են իրենց:

Կարող ենք առաջին հայեացքից այն տպաւորութիւնն անգամ ունենալ, թէ Վ. Շուշանեանի ու նրա հերոսների՝ երկրից հեռացումի ընտրութիւնը արդարացուած չէ, քանի որ տառապանքների երկրում են, եւ այն նաեւ իրենց Հայաստանն է, միակը, որ մնացել է աշխարհում, բայց՝ օտարի կրնկի տակ: Հերոսին ուսուցիչ Աւետիսեանը, Արփիկը յորդորում են մնալ, բայց՝ անօգուտ: Վճիռը կայացուած է:

Ու թէեւ Երուանդն այստեղ հասցնում է լցուել ատելութեան իր բաժնեչափով համայնավար կայսերական արշաւի դէմ, «հասցնում» է նաեւ սիրել, քնքշանալ: Այս ամէնի կողքին կայ յիշողութեան ծանր բեռը. լքուած երկրի կարօտը ներքնապէս կեղեքում է իրեն, բայց եւ՝ ջրդեղում: Կարօտը Երուանդի մէջ վերաճում է բուռն հակազդեցութեան՝ ընդդէմ ազգայինից ամենօրեայ նահանջի, ինչի ականատեսն է, ընդդէմ անգամ ներքնատես,

⁶ Նոյնը, Ընտրանի, էջ 130:

⁷ Նոյն տեղում, էջ 190-191:

մաքրամաքուր սիրոյ, որը, սակայն, չի ծաղկելու իր կորուսեալ երկրում, ընդդէմ արեւմտահայ մշակոյթի խամրումի, որը ելման հունդերը ունի իր մէջ, որը բորբոք ու մշտավառ հուր է պահել իր համար:

Սիրոյ աշխարհում եւս գնում է ընտրութեան յամառ պայքար: Հեղինակը բարդագոյն խնդիր դնում է նաեւ Արփիկի առջեւ, որը հմայուած է Երուանդով, սիրում է անմնացորդ, բայց չի հետեւում նրան: Հերոսուհու այս քայլը գեղարուեստական շերտերից հասնում է հոգեբանական եւ մշակութային դիմակայութեան սահման: Սկզբում գրքունակ էր աղջիկը. հիմնականում արեւելահայ բանաստեղծների «օգնութեամբ», Երուանդի մէջ գտնելով երազի իր ասպետին, այնուհանդերձ ի վիճակի չեղաւ յաղթահարել միջավայրի պայմանականութիւնների բեռը, չհասաւ սիրոյ նախապատուութեան: Արփիկը ճիշդ է «արեւելահայ» տեսանկիւնից, բայց նա վարում է ինչպէս Երուանդը՝ չկրկնելով նրան: Նա սնուել է ուրիշ մթնոլորտում, ժողովրդի հոգեբանաբարոյաբանական ասանդական «նստուածքների» մէջ է թրծել ընկերային հայեացքի կարծրատիպը՝ նոյնքան յամառ, նոյնքան տոկուն: Սա որոշ չափով գրական դաստիարակութեան հետեւանք է:

Նա ա՛յդ աշխարհում ապրելու դատապարտուածութիւնն ունի՝ ետ չմնալով սիրած երիտասարդից: Նրա համար ծննդավայրի ընտրութիւնը նոյնչափ առաջնային է, որքան արեւմտահայերի համար: Բաժանարար ընդհանրական գիծ է սա, որ տարանջատում է երկու անհատներին, տարանջատում է հայութեան երկու հատուածները:

Հոգու ազատութեան բացարձակացման ջիղն է սա, որը Վ. Շուշանեանի համար վերաճել է կենսափիլիսոփայութեան:

Խորամուխ լինելով հոգեբանական տուայտանքների մէջ, որոնք ապրում է Երուանդը, մենք կարող ենք հասկանալ ու ընդունելի դիտել հերոսի անընդմէջ «փախուստի» շերտերը, ինչն իրականում վերադարձ է դէպի սկիզբը, դէպի ժողովրդի ի՛ր հատուածի ողբերգական ցիրուցան, արինոտ կեցութիւնը: Արկածային մի դրուագ փոխանցում է ազգային պայքարի մասին հերոսի գիտակցութիւնը: Բաթումից Պոլիս մեկնելուց առաջ Երուանդն ու ընկերներն աշխատում են պարսիկների պարտէզում՝ շոգենաւի տոմսակ ձեռք բերելու համար: Գծուծ գիւղատնտեսը դժգոհ է տղաների մեկնելուց: Ծագում է ծեծկոտուք աշխատանքը լքելու համար:

Ոստիկանները միջամտում են: Կալանքի պատճառով վտանգում է Պոլիս մեկնելը առաջին շոգենաւով: Վ. Շուշանեանը առիթը բաց չի թողնում մահմեդական վրացու շուրթերով «ամփոփելու» ազգային կորուստների պատճառականութեան իր ըմբռնումը. «Եթէ,- կ'ըսէր,- բոլոր հայերը քեզի պէս ըլլային, թուրքերը ձեզ չէին կրնար ջարդել»⁸:

Հայ հոգիներին տարբաժանում են քաղաքական արկածները, իսկ սէրը վերամիաւորել չի յաջողում: Ահա Վ. Շուշանեանի «տղաների» իրական ողբերգական ընթացքները:

Резюме

Литературные и политические отклики падения Армянской Первой Республики в романе Вазгена Шушаняна “Дети любви и приключений”
С. Даниелян

1928-1929 гг. своими первыми романами Вазген Шушанян бросил вызов западноармянским знаменитым романистам прозаикам Акопу Ошакану и Заре Ворбуни. В романе «Дети любви и приключений» Шушанян показывает итоги падения Армянской Первой Республики. Примечательно, что лишь через 30 лет после журнального выхода, книга отдельным изданием был опубликован в Бейруте, а в независимой Армении, после долгого непростительного молчания, произведение был опубликован только в 2010 году.

Статья анализирует политические бурные события в Восточной Армении 20-х годов и их художественное, субъективное восприятие.

Summary

Literature and Political Reactions of the Falling of the Armenian First Republic in Vazgen Shushanian's Novel "The Boys of Love and Adventure"
S. Danielyan

1928-1929 years Vazgen Shushanyan challenged Western-Armenian authors Oshakan and Zareh Vorbuni with his first novels. The novel "The Boys of Love and Adventure" sums up the results of fall the First Armenian Republic. Remarkable that only 30 years after the magazine publishing, the novel was published in Beirut, and in independent Armenia reader saw Shushanian's best novel only in 2010.

Our article analyses the heavy political events of the Eastern Armenia and their artistic, subjective expressions.

⁸ Նոյն տեղում, էջ 212: